

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՀ ասպիրանտ

Բանալի բառեր. խորհրդարանական դիվանագիտություն, գիտական սահմանում,
միջխորհրդարանական համագործակցություն, քաղաքական երկխոսություն, հակա-
մարտությունների կարգավորում

«խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթը միջազգային հարաբերությունների բառապաշար է ներմուծվել ամերիկացի գիտնական և դիվանագետ Ֆիլիպ Ջեսսապի կողմից¹: Մեջբերելով նշանավոր քաղաքական գործիչ Դին Ռասկին, ով 1955թ. առաջին անգամ կիրառել էր եզրույթը՝ Ֆիլիպ Ջեսսապը 1956թ. Հաագայի միջազգային իրավունքի ակադեմիայում խորհրդարանական դիվանագիտությանը նվիրած մի դասընթացի ժամանակ նշել էր չորս առանձնահատկություն, որոնք խորհրդարանական դիվանագիտությունը տարբերակում են բազմակողմ բանակցությունների մյուս ձևերից: Առաջինը լայն օրակարգով մշտական գործող կազմակերպության առկայությունն է: Երկրորդ առանձնահատկությունը նստաշրջանների հանրային բնույթն է զանգվածային լրատվամիջոցների ներգրավմամբ: Երրորդ տեղում Ֆ. Ջեսսապը հիշատակում է ընթացակարգի կանոնները, որոնք կարող են օգտագործվել տակտիկական նպատակներով, որպեսզի ինչ-որ տեսակետ ընդունվի կամ դրա հակադիրը մերժվի և վերջապես, քննարկումների արդյունքներով ձայների մեծամասնությամբ բանաձևերի ընդունումը²:

Ի սկզբանե «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթով Դին Ռասկին և Ֆիլիպ Ջեսսապը բնորոշել են բազմակողմ բանակցային տարածության մեջ խորհրդարանական ընթացակարգերով ծավալվող դիվանագիտությունը: Թեև կան հեղինակներ (ամերիկացի քաղաքագետ Ռ. Ֆրիդհայմ և այլք), որոնք եզրույթը հենց այդ իմաստով էլ շարունակում են կիրառել, հարկ է նշել, որ խորհրդարանական դիվանագիտության կայացման և զարգացման գործընթացում նրա ընկալումը որոշակիորեն ընդլայնվել է, և ինչպես իրավամբ նշում է Բոյուսելի Բաց համալսարանի Եվրոպական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Դանիել Ֆիոթը, այժմ միայն միջազգային համագումարներին չէ, որ վերաբերում է³: Այսօր այդ հասկացությամբ բնո-

¹ Dembinski L. The Modern Law of Diplomacy: External Missions of States and International Organizations. Dordrecht: M. Nijhoff, 1988. p. 253.

² Նույն տեղում:

³ Fiott D. On the Value of Parliamentary Diplomacy. *Madariaga Paper*, Vol. 4, No. 7, April 2011. [https://www.academia.edu/546268/On the Value of Parliamentary Diplomacy](https://www.academia.edu/546268/On_the_Value_of_Parliamentary_Diplomacy).

րոշում են խորհրդարանների և խորհրդարանականների միջազգային գործողությունները, որոնք կարող են լինել քիչ թե շատ ֆորմալիզացված հարաբերություններ⁴:

Խորհրդարանական դիվանագիտությունը դեռևս չի համարվում լայնորեն հետազոտված թեմա: Մինչ պրակտիկայում այն արագ զարգանում է, գիտության մեջ շարունակում է մնալ գործնականում չուսումնասիրված: Հետազոտողների և քաղաքական գործիչների կողմից պարբերաբար ընդգրծվում է խզումը խորհրդարանական դիվանագիտության պրակտիկայի և նրա տեսական իմաստավորման միջև⁵: Թերևս ոչ բավարար գիտական մշակվածության արդյունքում է, որ դեռևս գոյություն չունի «խորհրդարանական դիվանագիտություն» հասկացության համընդհանուր գիտական սահմանում: Որոշ հեղինակների կարծիքով՝ եզրույթը կարող է անգամ մոլորության մեջ գցել, քանզի նեղ իմաստով «դիվանագիտություն»-ը պետությունների շահերն առաջ տանելու մեթոդ է ամենից առաջ բանակցությունների միջոցով, մինչդեռ խորհրդարանականներն այդպիսի գործողություններում սովորաբար չեն ներգրավվում⁶: Գիտական հանրության շրջանակներում չկա լիակատար համաձայնություն առ այն, թե «խորհրդարանական դիվանագիտություն» հասկացությունն ինչպիսի հստակ ծավալ և բովանդակություն է ներառում: Հետազոտողներից յուրաքանչյուրը տալիս է իր սեփական սահմանումը՝ եզրույթի մեջ դնելով տարբեր իմաստային ծանրաբեռնվածություն:

Խորհրդարանական դիվանագիտության հայեցակարգի զարգացմանը շատ ժամանակ ու ջանքեր է տրամադրել նիդերլանդացի քաղաքական գործիչ, նախկին դիվանագետ Ֆրանս Վայսգլասը: Աշխատություններից մեկում Ֆ. Վայսգլասը և Ջ. դե Բոյերը (համահեղինակ) նշում են, որ «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթը կիրառում են՝ նկատի ունենալով «խորհրդարանականների կողմից իրականացվող միջազգային միջոցառումների ողջ շրջանակը երկրների միջև փոխըմբռնումը խորացնելու, կառավարությունների նկատմամբ վերահսկողությունը բարելավելու գործում միմյանց աջակցելու և միջկառավարական հաստատությունների օրինականությունը

⁴ Burgos Quezada, Mauricio y Javier Riffo Muñoz, José Luis (editores) *Diplomacia Parlamentaria*. Valparaíso : Senado de Chile, 2014. p. 52.
file:/C:/Users/Publish%20User1/Downloads/libro%20DIPLOMACIA%20PARLAMENTARIA..

⁵ Stavridis S. *Parliamentary Diplomacy: some preliminary findings*, Jean Monnet Working Paper in Comparative & International Politics No.48, Political Studies Department, Università di Catania, November 2002. <http://aei.pitt.edu/591/1/jmwp48.htm>. (last accessed 24.05.2016 11:05).

⁶ Bajtaj P. *Shaping and Controlling Foreign Policy-Parliamentary Diplomacy and Oversight, and the Role of the European Parliament*. Policy Department, Directorate-General for External Policies. July 2015. p. 3. [www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU\(2015\)549045_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU(2015)549045_EN.pdf).

բարձրացնելու նպատակով⁷: Ֆ. Վայսգլասի և Ջ. դե Բոյերի առաջարկած սահմանումն իրենց աշխատանքներում մեջբերում և զարգացնում են Ռ. Սուկման⁸ (Ստրաստեգիական և միջազգային հետազոտությունների կենտրոնի (CSIS) գործադիր տնօրեն, Ինդոնեզիա), Փ. Բաջտայը⁹ և այլք:

Հաշվի առնելով «խորհրդարանական դիվանագիտություն» թեմայի միջառարկայական բնույթը՝ հույն միջազգայնագետ Ջ. Նուուլասը վերլուծությունն իրականացնում է երկու մակարդակում: Առաջինը վերաբերում է նրա իրավական բնույթին և կապված է միջազգային հարաբերությունների ոլորտում խորհրդարանի ինստիտուցիոնալ իրավասության հետազոտման հետ: Երկրորդ մակարդակն առնչվում է խորհրդարանական դիվանագիտության քաղաքական բնույթին և վերաբերում երկրի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման մեջ խորհրդարանի ունեցած ավելի լայն քաղաքական դերին: Միավորելով երկու մակարդակները՝ Ջ. Նուուլասը խորհրդարանական դիվանագիտությունը ներկայացնում է՝ իբրև «միջազգային հարաբերություններում խորհրդարանի կողմից իրականացվող գործողություններ թե՛ ինստիտուցիոնալ իրավասության շրջանակներում, և թե՛ իբրև կենտրոնական գործոն ներքին քաղաքականության մեջ»¹⁰: Միաժամանակ, խորհրդարանական դիվանագիտությունը սերտորեն կապված է տնտեսական դիվանագիտության հետ՝ օգտագործելով վերջինիս սկզբունքներն ու մեթոդները¹¹: Գերմանացի քաղաքագետ Ն. Գյոտցը «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթը դիտարկում է երկու տեսանկյունից: Առաջինում այն ընկալվում է իբրև որոշումների ընդունման առանձնահատուկ մեթոդ: Սա, ըստ էության, այն նույն հայեցակարգն է, որով խորհրդարանական դիվանագիտությունն ի սկզբանե մուտք է գործել միջազգային հարաբերու-

⁷ Weisglas, F. and de Boer G. "Parliamentary Diplomacy", The Hague Journal of Diplomacy, Vol. 2 (2007). Pp. 93-94. Available at:

<http://www.fransweisglas.nl/images/uploads/file/parliamentary%20diplomacy.pdf>.

⁸ Sukma R. Political Change, Foreign Policy and Parliamentary Diplomacy. Statement delivered at the 3rd Annual CDI Indonesia-Australia Parliamentary Committee Forum, Jakarta, 3 July 2008. p. 10 Available at: http://archives.cap.anu.edu.au/cdi_anu_edu_au/IND/2008-09/D_P/2008_07_IND_3rd_Parl_Comm_Wkshp_JKT/2008_07_IND_3rd_Parl_Comm_Wkshp_JKT_KeyNote.pdf. (last accessed 25.05.2016 11:20).

⁹ Bajtay P. Shaping and Controlling Foreign Policy - Parliamentary Diplomacy and Oversight, and the Role of the European Parliament. Policy Department, Directorate-General for External Policies. July 2015. p. 10. Available at: [www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU\(2015\)549045EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU(2015)549045EN.pdf).

¹⁰ Noulas G. The role of parliamentary diplomacy in foreign policy. Foreign policy journal. 22. 10.2011. Available at: <http://www.foreignpolicyjournal.com/2011/10/22/the-role-of-parliamentary-diplomacy-in-foreign-policy/>. (last accessed 11.03.2016, 21:40).

¹¹ Manasserian T., Economic diplomacy: from theory to real life, Yerevan State University Department of Economics, YSU Print, Yerevan, 2014, pp. 597-611.

թյուններ՝ բնութագրվելով ինստիտուցիոնալացմամբ, ընթացակարգի կանոններով, հանրային քննարկմամբ և որոշումների նախագծերի քվեարկությամբ¹²:

«խորհրդարանական դիվանագիտություն» հասկացության ըմբռնման երկրորդ մոտեցումը վերաբերում է դերակատարների կոնկրետ տեսակին՝ խորհրդարանական գործակալներին: Սա նշանակում է, որ օրենսդիր մարմիններն ինքնուրույնաբար կազմակերպում են իրենց դիվանագիտական ներգրավվածությունը¹³: «Ներկայիս բանավեճերում «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթն ավելի հաճախ կիրառվում է դիվանագիտական գործունեությանը մասնակցող անձանց կամ մարմինների ինստիտուցիոնալ ֆոնը բնորոշելու համար, և հատկանշական է, որ խորհրդարանականները հենց այդ առումով էլ այն կիրառում են», -գրում է Ն. Գյոտցն ու հավելում, որ խորհրդարանական դիվանագիտությունն այդ իմաստով վերաբերում է միջխորհրդարանական համագործակցությանը, որի նախատիպ հաստատությունը Միջխորհրդարանական միությունն է¹⁴: Իրականում, ըստ Ն. Գյոտցի, եզրույթը կիրառվել է՝ կապված հենց այս կազմակերպության հետ, նախքան պրոֆեսիոնալ դիվանագետների կողմից իրականացվող բազմակողմ բանակցությունների մեթոդները բնորոշելու համար նրա ներմուծումը:

Ըստ իսպանացի քաղաքական գործիչ Ֆ. Տրիլլոյի՝ «խորհրդարանական դիվանագիտություն»-ն ընդգրկում է օրենսդիր մարմիններին և նրանց անդամներին միմյանց կապող ինստիտուցիոնալ և ոչ ֆորմալ հարաբերությունների բարդ ցանցը. «Լայն իմաստով այն ներառում է օրենսդիր մարմնի սահմանադրական լիազորությունները միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի վավերացման ոլորտում և այդ ոլորտում կառավարության գործողությունների վերահսկողությունը»¹⁵:

«խորհրդարանական դիվանագիտություն» հասկացությունը գրեթե նույն կերպ է բնորոշում մեքսիկացի քաղաքագետ Ֆ. Սոլանան. «խորհրդարանական դիվանագիտության տակ հասկացվում է օրենսդիր իշխանության

¹² Götz N "On the Origins of 'Parliamentary Diplomacy' Scandinavian 'Bloc Politics' and Delegation Policy in the League of Nations", Cooperation and Conflict: Journal of the Nordic International Studies Association, Vol 40, No 3 (2005), p. 263.

¹³ Masters L. South Africa's emerging parliamentary diplomacy and soft power. Strategic Review for Southern Africa, Vol 37, No 2 (2015). P. 76. Available at: [http://www.up.ac.za/media/shared/85/Strategic%20Review/Vol%2037%20\(2\)/masters-pp74-93.zp74597.pdf](http://www.up.ac.za/media/shared/85/Strategic%20Review/Vol%2037%20(2)/masters-pp74-93.zp74597.pdf). (last accessed 26.05.2016, 10:40).

¹⁴ Götz N "On the Origins of 'Parliamentary Diplomacy' Scandinavian 'Bloc Politics' and Delegation Policy in the League of Nations", Cooperation and Conflict: Journal of the Nordic International Studies Association, Vol 40, No 3 (2005), p. 264.

¹⁵ Trillo-Figueroa, Federico La diplomacia parlamentaria. El País, España. Tribuna.02 de abril de 1997. Disponible en: http://elpais.com/diario/1997/04/02/opinion/859932008_850215.html.

և նրա մարմինների միջամտությունը կամ մասնակցությունը պետության արտաքին քաղաքականության մշակմանը, վերահսկողությանն ու իրականացմանը, ինչպես նաև այն ինստիտուցիոնալ և ոչ ֆորմալ հարաբերությունների սկզբունքների բնորոշումը, որոնք կապակցում են մյուս երկրների օրենսդիր իշխանություններին և նրանց մարմիններին»¹⁶:

Ըստ իրավագետ Ֆեդերիկո Վալլեխոս դե լա Բարրայի (Չիլիի)՝ խորհրդարանական դիվանագիտությունը վերաբերում է կանոնավոր և հաջորդական միջազգային գործունեությանը, որը խորհրդարանները ծավալում են որոշակի պետական նպատակների հասնելու համար. «Այն, ըստ էության, դիվանագիտություն է, որում չկա ո՛չ կառավարությունների ներկայացվածություն, ո՛չ էլ նրանց անունից բանակցելու լիազորություն, և որի հայտնությունն ակնհայտ ապացույցն է պետության միջազգային հարաբերությունների զարգացման գործում խորհրդարանների աճող ազդեցության»¹⁷:

Որոշ հետազոտողներ և քաղաքական գործիչներ «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթը կիրառում են ավելի նեղ իմաստով՝ առանձնացնելով այն միջխորհրդարանական շփումների ավանդական ձևերից և համարելով **խորհրդարանականների միջև փոխազդեցության նոր մակարդակ**: Այս մոտեցման կողմնակիցները հաճախ հղում են կատարում Արևմտաեվրոպական միության վեհաժողովի խորհրդարանական և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովի անդամ Վերա Սկարչիալուպիին, ով 2000թ. «խորհրդարանական դիվանագիտություն. միջազգային վեհաժողովների դերը» վերտառությամբ իր զեկույցում մասնավորապես նշել էր. «խորհրդարանականների միջև շփումները, որոնք վերջին տարիներին ստեղծել են մի շարք նախաձեռնություններ, ներկայումս արտահայտվում են ավելի կառուցվածքային և կազմակերպական ձևով, որում խորհրդարանական համագործակցությունը փոխարինվել է խորհրդարանական դիվանագիտությամբ: Այդ եզրույթն ընդգրկում է ինչպես ավանդական ձևի ինստիտուցիոնալ կապերը, այնպես էլ ինքնաբուխ ձևավորված և այնուհետ ինստիտուցիոնալացված կապերը՝ այդպիսով իրենց իրավասությունների սահ-

¹⁶ Richard Muñoz María Paz & *González Chávez* Jorge. Diplomacia Parlamentaria: abordajes conceptuales y expresiones en el Reglamento de la Cámara de Diputados, Cámara de Diputados, México, 2011. Disponible en: www.diputados.gob.mx/sedia/sia/spe/SPE-ISS-04-11. pp. 15-16.

¹⁷ Richard Muñoz María Paz & *González Chávez* Jorge. Diplomacia Parlamentaria: abordajes conceptuales y expresiones en el Reglamento de la Cámara de Diputados, Cámara de Diputados, México, 2011. Disponible en: <http://www.diputados.gob.mx/sedia/sia/spe/SPE-ISS-04-11.pdf>. pp. 11-12. (última visitada 05.05.2016. 14:30).

մաններում գործող խորհրդարանականներին հնարավորություն տալով լուծել լուրջ խնդիրներ, որոնք դուրս են ազգային սահմաններից»¹⁸:

Գերմանացի քաղաքագետ Մ. Օբրեխթը խորհրդարանական դիվանագիտությունը համարում է խորհրդարանական արտաքին քաղաքականության երեք ձևերից մեկը՝ առանձնացնելով այն խորհրդարանական համագործակցությունից և միջխորհրդարանական վեհաժողովների շրջանակներում անցկացվող հանդիպումներից: Խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում հեղինակը կարևորում է արտասահմանյան ծառայողական այցերը, այլ երկրների հետ բարեկամական խմբերը և լիազույնար նիստերում հյուրերի ընդունումը՝ նշելով, որ «խորհրդարանական համագործակցություն» եզրույթը դուրս է այդ գործունեության շրջանակներից, քանզի մատնանշում է տարբեր (երկկողմ կամ եռակողմ) խորհրդարանական կառույցների առավել ինտենսիվ համագործակցություն¹⁹:

«Ակնհայտ է, որ խորհրդարանների միջազգային ակտիվությունն զգալիորեն աճել է և հանդիսանում է դիվանագիտության կարևոր կողմ, ինչն այլ է, քան պարզապես խորհրդարանական համագործակցությունը միջազգային գործերում», - գրում է իսպանացի քաղաքական գործիչ Պ. Գարսիա-Էսկուդերո Մարկեսը²⁰:

Միջխորհրդարանական միության՝ «խորհրդարանների ներգրավվածությունը միջազգային գործերում» 2005թ. զեկույցում ևս խորհրդարանական դիվանագիտությունն առանձնացվում է միջազգային հարաբերություններում խորհրդարանների գործունեության այլ ձևերից: Ջեկույցը ներկայացնում է նաև խորհրդարանական դիվանագիտության կողմերի հակիրճ ցանկը, որում նկատելի է խորհրդարանական դիվանագիտության դերի շեշտադրում հատկապես հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման գործընթացներում²¹: Ընդ որում, այդ մոտեցումը բավականին հաճախ է

¹⁸ Squarcialupi V. Parliamentary diplomacy: the role of international assemblies. Report submitted on behalf of the Committee for Parliamentary and Public Relations. Document a/1685. Assembly of the Western European Union (WEU, 2000). Available at: <http://dspace.africaportal.org/jspui/bitstream/123456789/17678/1/Parliamentary%20Diplomacy%20The%20Role%20of%20International%20Assemblies.pdf?1>. (last accessed 21.03.2016, 13:30).

¹⁹ Obrecht M. Niedergang der Parlamente? Transnationale Politik im Deutschen Bundestag und der Assemblée nationale. Ergon-Verlag 2006. S. 238. Verfügbar um: <https://halshs.archives-ouvertes.fr/tel-00381932/document>. (zuletzt aufgerufen 27.05.2016, 10:05).

²⁰ García-Escudero Márquez P. Diplomacia y Cooperación Parlamentarias: Las Cortes Generales. *Asamblea: Revista Parlamentaria de la Asamblea de Madrid*, No. 19 (2008). p.7. <http://www.asambleamadrid.es/RevistasAsamblea/ASAMBLEA%2019%20COMPLETA.pdf>.

²¹ Parliamentary Involvement in International Affairs. A report by the Inter-Parliamentary Union (IPU) to the Second World Conference of Speakers of Parliaments New York, 7-9 September 2005.p.8. Available at: <http://www.ipu.org/splz-e/sp-conf05/involvement-rpt.pdf>.

հանդիպում: Դրա կողմնակիցներից մեկի՝ ռուս քաղաքագետ Ե. Կոնդրաշովայի կարծիքով խորհրդարանական դիվանագիտությունը արտասահմանյան և միջազգային դերակատարների հետ խորհրդարանի փոխգործակցության մյուս ձևերից տարբերող հիմնական նշանն ակտիվ գործողությունների առկայությունն է, որոնք ցուցաբերվում են խորհրդարանականների կողմից առկա հակամարտությունների կարգավորման կամ շփումներում նոր մակարդակի հասնելու համար²²:

Միջխորհրդարանական միության հովանավորությամբ 2006թ. լույս տեսած «խորհրդարանը և ժողովրդավարությունը 21-րդ դարում» վերնագրով ուղեցույցում սոցիալական տեսաբան Դ. Բիթհամը խորհրդարանական դիվանագիտությունը դիտում է միջխորհրդարանական համագործակցության երեք ձևերից մեկը: Նշվում է նաև, որ խորհրդարանական դիվանագիտությունը հաճախ օգտագործվում է հարևան երկրներում կամ սեփական տարածաշրջանում առկա հակամարտությունների կարգավորման ընթացքում քաղաքական երկխոսությունն առաջ տանելու համար²³:

Ըստ տեսաբաններ Ս. Ստավրիդիսի և Ա. Մալամուդի՝ խորհրդարանական դիվանագիտությունը միջազգային հարաբերություններում խորհրդարանական ինստիտուտների գործունեության երեք հիմնական ձևերից մեկն է, որը բոլորովին վերջերս է ի հայտ եկել և հիմնականում կենտրոնացած է խաղաղաստեղծ և հակամարտությունների կանխարգելման ուղղությամբ իրականացվող գործողությունների վրա²⁴:

Ավելի վաղ՝ 2002թ. հրապարակած իր աշխատություններից մեկում հույն միջազգայնագետ Ս. Ստավրիդիսը նշում է, որ խորհրդարանական դիվանագիտությունը և խորհրդարանական պատասխանատվությունն արտաքին և անվտանգության (պաշտպանության) քաղաքականության ոլորտներում նույնը չեն, չնայած, ըստ հեղինակի, սխալ կլիներ անտեսել դրանց միջև միջև փոխադարձ կապը, քանզի առանց խորհրդարանական պատասխանատվության որևէ ձևի չի կարող գոյություն ունենալ խորհրդարանական դիվանագիտություն ընդհանրապես: Միևնույն ժամանակ, միջազգայնագետի կարծիքով, նրանց միջև կա տարբերություն. հաշվետվողականությունը

²² Кондрашева Е. В. Эволюция парламентаризма в контексте внешнеполитической деятельности России. Дис. на соиск. учен. степ. канд. полит. наук. М. 2008. с. 26.

²³ Beetham, David *Parliament and democracy in the twenty-first century. A guide to good practice*. Inter Parliamentary Union 2006. P.173. Available at: http://www.ipu.org/PDF/publications/democracy_en.pdf. (last accessed 27.05.2016, 14:00).

²⁴ Malamud A. y Stavridis S. Parliaments and parliamentarians as international actors. Bob Reinalda (ed.), *The Ashgate Research Companion to Non-State Actors*, Ashgate, Aldershot, 2011. p. 101. Available at: <http://apps.eui.eu/Personal/Researchers/malamud/Ashgate-Malamud-Stavridis.pdf>. (last accessed 15.10.2016, 16:10).

կապված է ներքին քաղաքականության հետ, մինչդեռ դիվանագիտությունը ներառում է պետության միջազգային հարաբերությունները²⁵:

Այնքանով, որքանով խորհրդարանականները համարվում են ժողովրդի ընտրյալներ, երբեմն հավասարության նշան է դրվում խորհրդարանական դիվանագիտության և ժողովրդական դիվանագիտության միջև: Այդպիսի մոտեցման հետ համաձայն չէ ՌԴ Պետդումայի միջազգային գործերի կոմիտեի նախագահ Դ. Ռոզոզինը. «Ես չեմ նույնականացնի խորհրդարանական դիվանագիտությունը ժողովրդական դիվանագիտության հետ, ինչպես դա հաճախ տեղի է ունենում: «Ժողովրդական դիվանագիտություն»-ը, ի տարբերություն պաշտոնական և խորհրդարանական դիվանագիտության, իր վրա կոնկրետ պարտավորություններ չեն կրում, չի կատարում նախագահի հանձնարարությունները և չունի հստակ սահմանված արտաքին քաղաքական գործառույթներ: Դա է նրանց գլխավոր տարբերությունը»²⁶:

Թեմայի համատեքստում ռուս քաղաքագետ Ե. Կոնդրաշովան ևս նշում է, որ չնայած արտաքին քաղաքականության վրա ազդելու այս երկու լծակների նմանությանը (պաշտոնական դիրքորոշումից հարաբերականորեն ազատ լինելը) կան և մեծ տարբերություններ. խորհրդարանականները ողջ ժողովրդի կամ նրա մի մասի ներկայացուցիչներն են, ընդ որում՝ օրինական, այն դեպքում, երբ տարբեր կազմակերպություններ օրենքով կարող են ներկայացնել միայն սեփական շահերը: Բացի այդ, արդեն ձևավորվել է այդ երկու խողովակների միջոցով արտաքին քաղաքականության իրականացման տարբեր պրակտիկա, ընդ որում, խորհրդարանականներն ավելի սերտ են համագործակցում կառավարական խողովակների հետ²⁷:

Քաղաքական գործիչների և հետազոտողների շրջանակներում լայն աջակցություն է գտնում այն հայեցակարգը, ըստ որի՝ խորհրդարանական դիվանագիտությունը կապող օղակ է ժողովրդական և պաշտոնական դիվանագիտության միջև, քանզի խորհրդարանն իր պատգամավորների միջոցով հասարակության մտահոգություններն արտաքին քաղաքական հարցերում առավել հասանելի է դարձնում իշխանություններին, իսկ կարևոր հարցերի շուրջ կառավարության քաղաքականությունը՝ հասարակության լայն զանգ-

²⁵ Stavridis S. Parliamentary Diplomacy: some preliminary findings, Jean Monnet Working Paper in Comparative & International Politics No.48, Political Studies Department, Università di Catania, November 2002. Available at: <http://aei.pitt.edu/591/1/jmwp48.htm>.

²⁶ Руглый стол #26. Парламентская дипломатия. [Электронный ресурс]: Режим доступа: <http://old.russ.ru/politics/20020605-stol.html>. (Дата обращения: 15.10.2016 г. 16:30).

²⁷ Кондрашева Е. В. Эволюция парламентаризма в контексте внешнеполитической деятельности России. Дис. на соиск. учен. степ. канд. полит. наук. М. 2008. с. 26.

վածներին²⁸: Այլ կերպ ասած՝ խորհրդարանները պատասխանատու են քաղաքական որոշումները ժողովրդին հասցնելու համար: Խորհրդարանի՝ իբրև արտաքին քաղաքականության մեջ միջնորդի հայեցակարգը կապված է իշխանության այդ մարմնի ներկայացուցչական բնույթի հետ, որը շատ հաճախ ընդգծվում է իբրև խորհրդարանի հիմնարար գործառույթ:

Ինչպես տեսնում ենք, «խորհրդարանական դիվանագիտություն» հասկացությամբ բնորոշվում է մի երևույթ, որին կարելի է նայել տարբեր դիտանկյուններից: Գիտական հանրության շրջանակներում միասնական մոտեցումն այդ առումով բացակայում է: Որոշ հետազոտողների կողմից եզրույթը կիրառվում է նույն իմաստով, որով այն սկզբնապես ներմուծվել է միջազգային հարաբերությունների բառապաշար՝ իբրև բազմակողմ ֆորումներում խորհրդարանական ընթացակարգերով ծավալվող գործունեություն, ըստ էության, նկատի ունենալով «կոնֆերանսային դիվանագիտություն»-ը: Խորհրդարանական դիվանագիտության նման մեկնաբանումը չի արտահայտում նրա բուն էությունը և կարող է ի վերջո հանգեցնել նրա դերի և ներուժի թերագնահատմանը: Շատ հաճախ «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթը կիրառվում է լայն իմաստով՝ ներառելով միջազգային ասպարեզում խորհրդարանականների կողմից իրականացվող միջոցառումների ամբողջությունը, երբեմն էլ առանձնացվում միջխորհրդարանական համագործակցության ավանդական ձևերից: «Խորհրդարանական դիվանագիտություն» հասկացության բնորոշման վերջին մոտեցումը, թերևս, ավելի ճիշտ է: Իհարկե, խորհրդարանի գործունեությունն իր որոշ սահմանադրական լիազորությունների իրականացման ոլորտում կարող է ունենալ միջազգային նշանակություն (միջազգային պայմանագրերի վավերացում, պետական բյուջեի հաստատում, արտաքին քաղաքականության ոլորտում կառավարության գործունեության վերահսկողություն և այլն), բայց կայնպես, դժվար է չհամաձայնել գերմանացի քաղաքագետ Մ. Օբրեխտի դիտարկմանն առ այն, որ միայն այն դեպքում, երբ «դիվանագիտություն» ասելիս հասկանում ենք շահերի բանակցային համաձայնեցում հիմնախնդիրների ամենակիրառելի լուծումը գտնելու համար, միայն այդ ժամանակ կարելի է պատգամավորների գործունեությունը «դիվանագիտական» համարել²⁹: Ընդ որում առանցքն այս դեպքում երկխոսության գաղափարն է, որը հաճախ ընդգծվում է

²⁸ ՀՀ ԱԺ նախագահ Հովհիկ Աբրահամյանը հանդիպել է ԱԳՆ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների ղեկավարների հետ. 02.09.2009. Էլեկտրոնային ռեսուրս, հասանելիության ռեժիմ՝ <http://armenpress.am/arm/print/569409/>.

²⁹ Obrecht M. Niedergang der Parlamente? Transnationale Politik im Deutschen Bundestag und der Assemblée nationale. Ergon-Verlag 2006. S. 238. Verfügbar um: <https://halshs.archives-ouvertes.fr/tel-00381932/document>. (zuletzt aufgerufen 14.06.2016 14: 054).

իբրև խորհրդարանական դիվանագիտության բուն էություն: Խորհրդարանական դիվանագիտության այդպիսի ըմբռնումը հարուստ է օրինակներով:

«Խորհրդարանական դիվանագիտությունը միջոց է, որով երկու կամ ավելի խորհրդարաններ կազմակերպում են շարունակական երկխոսություն՝ միջազգային առանցքային հիմնախնդիրների շուրջ», - նշված է խորհրդարանական զարգացման վերաբերյալ գիտելիքների գլոբալ ու առաջատար հարթակի՝ AGORA-ի կայքում³⁰:

ԵւեսԿ «Խորհրդարանական դիվանագիտության խթանումը» վերտառությամբ զեկույցում նշված է. «Վեհաժողովը ճանաչում է խորհրդարանական դիվանագիտության բուն էությունը հանդիսացող երկխոսության և համագործակցության դրական ներդրումը միջպետական լարվածության թուլացման, մարդու իրավունքների, խորհրդարանական ժողովրդավարության, օրենքի գերակայության և այլ բարդ հիմնախնդիրների ոլորտում հնարավոր լուծումներ գտնելու գործում»³¹:

«Շատ զգայուն հարցեր հաջողությամբ լուծվել են խորհրդարանական դիվանագիտության հիմքը հանդիսացող երկխոսության և բանակցությունների միջոցով», - 2005թ. սեպտեմբերին Խորհրդարանների խոսնակների՝ Նյու Յորքում անցկացված Երկրորդ համաշխարհային համաժողովում Իսլամական համաժողովի անդամ-պետությունների կազմակերպության խորհրդարանական միության (PUOICM) անունից ելույթ ունենալիս նշել էր Մ. Քիլիկը³²:

Իբրև նախնական եզրակացություն՝ խորհրդարանական դիվանագիտությունը կարելի է բնորոշել որպես խորհրդարանականների կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն, որն ուղղված է արտաքին քաղաքական որոշակի նպատակներին հասնելու գործընթացում քաղաքական երկխոսությունն առաջ տանելուն և զարգացնելուն: Ընդ որում երկխոս-

³⁰ Portal for Parliamentary Development:Home: Resources: Areas of Expertises: Parliamentary Diplomacy. Available at: <http://www.agora-parl.org/resources/aoe/parliamentaryinstitution/parliamentary-diplomacy>.

³¹ *João Bosco Soares da Mota Amaral* Promoting parliamentary diplomacy. Doc. 12428 Report. Committee on Political Affairs and Democracy. *The Parliamentary Assembly of the Council of Europe*. 26 October 2010. P.3. Available at: <http://semanticpace.net/tools/pdf.aspx?doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbmQvbncveG1sL1hSZWYvWDJlLURXLWV4dHIuYXNwP2ZpbGVpZD0xMjU3NCZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NiZWVudGljcGFjZS5uZXQvWHNsdc9QZGYvWFJlZi1XRC1BVCIYTUwyUERGLnhzbA==&xsltparams=ZmlsZWlkPTEyNTc0>. (Last accessed 02.06.2016. 09:10).

³² Summary records of the proceedings of the 127th IPU Assembly. Session I: Roundtable discussion: Multilateralism and the role of parliamentary diplomacy. Québec City (Canada) 21-26 October 2012.p. 46. www.ipu.org/conf-e/127/sr.pdf. (Last accessed 31.06.2016. 10:30).

սությունն այս դեպքում կիրառվում է ոչ այնքան պարտադիր վերջնարդյունքին հասնելու, որքան խորհրդարանական դիվանագիտության ճկուն միջոցների գործադրմամբ քաղաքական գործընթացի մասնակիցների միջև փոխըմբռնման խորացման, դիրքորոշումների մերձեցման և վստահության մթնոլորտի ձևավորման, ասել է թե՛ բանակցությունների համար բարենպաստ քաղաքական մթնոլորտի ստեղծման շեշտադրմամբ:

Այսպիսով, խորհրդարանական դիվանագիտությունը ֆենոմեն է, որի հետագա արժեքը դեռ պետք է գնահատվի ու վերհիմաստավորվի: Ու թեև գոյություն ունի ոչ մեծ գիտական հետաքրքրություն, և միջազգային հարաբերությունների ոլորտի որոշ դասական մտածողներ էլ կասկածի են ենթարկում այն՝ համարելով ոչ միանշանակ, այնուամենայնիվ, ինչպես նշում է հույն միջազգայնագետ Ս. Ստավրիդիսը՝ մեր ժամանակներում խորհրդարանական դիվանագիտությունն այլևս փաստ է. «Ղասերից մեկը, որ խորհրդարանական դիվանագիտությունը կարող է ուսանել տարածաշրջանային կառավարություններին այն է, որ միջազգային հարաբերությունները գործադիր իշխանության բացառիկ առանձնաշնորհը չեն այլևս: Գլոբալացված աշխարհում հնարավորություններ կան շատ սուբյեկտների, այդ թվում և տարածաշրջանների ու նրանց համապատասխան խորհրդարանների համար: Այդպիսի զարգացման մեջ առկա է նաև ժողովրդավարացման ակընհայտ տարր, որը չպետք է անտեսվի»³³:

³³ Stavridis S. Parliamentary Diplomacy: any Lessons for regional parliaments? Zaragoza, 2006. p. 25. [www.unizar.es/union europa/files/document/conferencia%2010.2006/SteliosStavridis english final.pdf](http://www.unizar.es/union%20europa/files/document/conferencia%202010.2006/SteliosStavridis%20english%20final.pdf).

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«խորհրդարանական դիվանագիտություն» հասկացության մեթոդաբանական խնդիրները

Բանալի բառեր. խորհրդարանական դիվանագիտություն, գիտական սահմանում, միջխորհրդարանական համագործակցություն, քաղաքական երկխոսություն, հակամարտությունների կարգավորում

«խորհրդարանական դիվանագիտություն» հասկացությամբ բնորոշվում է մի երևույթ, որին կարելի է նայել տարբեր դիտանկյուններից: Գիտական հանրության շրջանակներում միասնական մոտեցումն այդ առումով բացակայում է: Իբրև նախնական եզրակացություն խորհրդարանական դիվանագիտությունը կարելի է բնորոշել որպես խորհրդարանականների կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն, որը միտված է արտաքին քաղաքական որոշակի նպատակներին հասնելու գործընթացում քաղաքական երկխոսությունն առաջ տանելուն և զարգացնելուն:

Анна ГРИГОРЯН

Определение понятия "парламентская дипломатия"

Ключевые слова: парламентская дипломатия, научное определение, межпарламентское сотрудничество, политический диалог, разрешение конфликтов

Понятием «парламентская дипломатия» характеризуется явление, которое можно рассматривать с различных точек зрения. Общий подход в рамках научного сообщества отсутствует. В качестве предварительного заключения парламентскую дипломатию можно охарактеризовать как совокупность действий предпринимаемых парламентариями с целью продвижения и развития политического диалога в процессе достижения определенных политических целей.

Anna GRIGORYAN

Definition of the concept of "parliamentary diplomacy"

Key words: parliamentary diplomacy, scientific definition, interparliamentary cooperation, political dialogue, conflict resolution

The concept of "parliamentary diplomacy" is a phenomenon, that can be described from different points of view. The general approach within the scientific community is absent. As a preliminary conclusion, parliamentary diplomacy can be described as a set of actions undertaken by parliamentarians, which is aimed at promoting and developing political dialogue in the process of achieving certain political goals.